

«ԱՆԱՀԻՏ» ՀԱՆՐԵՍԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԼԵՋՈՒՆ ԵՎ ՈՃԸ

ՅՈՒ. Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Պարբերական հրատարակությունը, իբրև լեզվաբանական երևույթ, համադիր-բազմակերպ ու տարարանությամբ կողմերի յուրօրինակ համակարգային ամբողջություն է, որ բնութագրվում է մի շարք բնորոշիչ հատկանշաններով. ժանրային բազմատարրությամբ պայմանավորված լեզվաբանական հարուստ բազմազանությունը, խոսքի ղգայական-արտահայտչական և ինֆորմացիոն-տրամաբանական տարրերի զուգադրությունը, ընթերցող լսարանի, իբրև լեզվական ընդհանրության, առանձնահատկությունները (լեզվաբանական չեզոքությունը, տարասեռությունը), լեզվական միջոցների գործառական և իմաստային կիրարկման յուրահատկությունները, հեղինակային ակտիվ դիրքորոշումը և այլն:

Պարբերական հրատարակության լեզվական համակարգի կարևորագույն առանձնահատկություններից մեկն էլ նրա բազմաոճ բնույթն է՝ գիտական, հրապարակախոսական, գրական-գեղարվեստական, պաշտոնական ոճերի համադիր գոյությունը մեկ պարբերականի մեջ՝ մեկի կամ մյուսի գերակշռությամբ: Մի իրողություն, որ բնականաբար չի կարող անտեսվել հետազոտողի կողմից: Իբրև կանոն, սակայն, նշված ոճերից ուշադրության կենտրոնում հրապարակախոսական ոճն է, քանի որ այն ամենից ավելի է հատուկ պարբերական հրատարակությանը: Այդ իսկ պատճառով, որոշ հետազոտողների կարծիքով, առավել նպատակահարմար է պարբերականների լեզվաոճը գիտական քննության առնել ըստ գրանցում գործստված լրագրային-հրապարակախոսական ժանրերի, երբեմն նաև մեկ ժանրի՝ գլխավորապես հոդվածի կամ ռեպորտաժի լեզվական յուրահատկությունների¹:

Հետազոտման այս մեթոդը, թեև գործնականում միանգամայն պարզեցված ու մատչելի հնարավորություններ է ընձեռում հարցի ուսումնասիրմանը, բայց ունի նկատելի սահմանափակություն. դժվարություններ են ստեղծվում պարբերականի լեզվաբանական նկարագրի համակողմանի ուսումնասիրման համար, երկրորդ պլան են մղվում նրա ընդհանրական գծերն ու հատկանիշները:

(Գաղտնիք չէ, որ լրագրում կամ հանդեսում օգտագործվում են բառապաշարային, արտահայտչական, շարահյուսական միջոցներ, լեզվաբանական տարբեր միավորներ՝ անկախ ժանրային յուրահատկությունից):

Այս մեթոդը նվազ արդյունավետ է հատկապես, երբ նպատակ կա տվյալ պարբերականի լեզվաոճը գնահատել լեզվի պատմական զարգացման ընդհանուր համապատկերի վրա, լեզվական տարբեր մակարդակներում պատմականորեն կատարվող փոփոխությունների մեջ: «Անահիտի» լեզուն և ոճը հենց այդ տեսանկյունից քննելիս առավել արդյունավետ է վերլուծության այս-

¹ Օրինակ, Ա. Վինոկուրը այսպես է բացատրում իր դիրքորոշումը. «Միայն ռեպորտաժի լեզուն է, որ ես համարում եմ լրագրային լեզու, թեև շատ լավ գիտեմ, որ լրագրում տպագրվում են ոչ միայն ռեպորտաժներ» (А. Винокур. Культура языка, М., 1929, с. 215). Իսկ Կ. Ռոզովան անվիճելիորեն հոդվածն է համարում լրագրային այն ժանրը, որի հրապարակախոսական բնույթը և ներգործող նպատակագրումը կասկածի ենթակա չեն, ուստի ե ամենից առաջ դիմում է հոդվածի լեզվի և ոճի ուսումնասիրությանը՝ տվյալ պարբերականի լեզվաոճը գնահատելու համար (տե՛ս К. А. Рогова, Стиль ленинской «Искры» и газеты «Новая жизнь», М., 1979, с. 14—15).

պես կոչված համադրական եղանակը², Այս պարագային արդեն հանդեսի լեզվի բառապաշարային ու քերականական մակարդակները քննության են առնվում տվյալ շրջափուլի արևմտահայ գրական աշխարհաբարի նորմերի ու ձևափոխությունների համեմատությամբ, միաժամանակ լրագրային-հրապարակախոսական լեզվի ու ոճի (այսուհետև՝ հրապարակախոսական ոճ) սկզբունքային առանձնահատկությունների հաշվառմամբ: Առանձին դեպքերում փորձ է արվում նշված լեզվական մակարդակները համեմատության մեջ դնել ժամանակի արևմտահայ մյուս պարբերականների լեզվական համապատասխան ձևերի ու ոճական հատկանիշների հետ:

«Անահիտում» գործառնվող ոճերից գլխավորապես խոսվելու է հրապարակախոսական ոճի մասին, որքանով որ մեզ ամենից առաջ հետաքրքրում է հանդեսի, իբրև պարբերական հրատարակության, տիպաբանությունը՝ դիտված լեզվական տեսանկյունից: Իսկ մյուս ոճերը քննվելու են այն չափով, ինչ չափով որ դրանք հատկանիշներ են ավելացնում նշված բնութագրմանը: Խոսքը ամենից առաջ գրական-գեղարվեստական ոճի մասին է, որ լայնորեն զործառնում է «Անահիտը», որպես գրական բնույթի հրատարակություն: (Բնականաբար, այս դեպքում մեր հետաքրքրությունից դուրս է հանդեսի աշխատակից-հեղինակների անհատական ոճերի ուսումնասիրությունը, առավել ևս, որ դա մեկ հանդեսի ընձեռած նյութի սահմաններում իրականացվելիք խընդիր էլ չէ: Դրանց մասին խոսք կլինի միայն հանդեսի լեզվաոճական ընդհանուր հարցերի կապակցությամբ):

«Անահիտը» բնութագրող մի շարք գործոններ հնարավորություն են տալիս խոսելու նրա լեզվի և ոճի, իբրև քիչ թե շատ համապարփակ երևույթի, ընդհանրական գծերի մասին: Որո՞նք են այդ գործոնները:

Առաջին. հանդեսի հրապարակախոսական բաժնի նյութերի զգալի մասը մի հեղինակի (Ա. Չոպանյան) գործ է, խորապես կրում է անհատական ոճի կնիքը:

Երկրորդ. մյուս հեղինակների գրվածքները հանդեսում տեղ են գտել ընտրողաբար՝ հենց լեզվի և ոճի առումով: Բացի այդ, դրանց մի մասը ոճական խմբագրման է ենթարկվել: Այդ «միջամտությունը» հիմնականում ընդունվել է հեղինակների կողմից (Սիամանթո, Վարուժան, Թեքեյան և ուրիշներ), բայց երբեմն էլ տեղիք է տվել ակնհայտ դժգոհությունների (Ա. Չաբրեզ, Գր. Վանցյան): Բոլոր դեպքերում, Չոպանյանի իբրև խմբագիր հետևել է շատ որոշակի սկզբունքների, ջանացել է հաբազատ մնալ լեզվի և ոճի հարցերի շուրջ հանդեսում առաջադրված տեսական դրույթներին³:

Երրորդ. որքան էլ բազմաբնույթ է հանդեսի աշխատակից-հեղինակների ոճը, որքան էլ տարաբնու է նրանց լեզուն, այսուհանդերձ, մի կարևոր գիծ ընդհանրական է գրեթե բոլորի համար: Խոսքը կանոնադրված ձևերի, հասունացող գեղարվեստական պահանջների, լեզվի ժողովրդայնացման, ազգային լեզվամտածողության մասին է:

Թեև 90-ականների սկզբի արևմտահայ մամուլի լեզվում նորմավորման միօրինակությունը ակնհայտ է, գրական հայերենը՝ բոլոր հիմնական օրինաչափություններով հաստատված, սակայն մի շարք ձևեր դեռևս ընդհանրացված չեն: Ժամանակի, առանձին դեպքերում նաև ավելի ուշ շրջանի պարբերականներում («Բյուրակն», «Մասիս», «Ծաղիկ», «Արևելյան մամուլ», «Հան-

² Նշանավոր ազգային-գրական գործիչ Արշակ Չոպանյանի խմբագրած «Անահիտ» ազգային-գրական և գեղարվեստական հանդեսն ունեցել է հրատարակության երկու շրջան՝ 1898—1911 և 1929-ից որոշ ընդմիջումով մինչև 1949 թ., Փարիզ, Հոգվածում քննվում են հանդեսի առաջին շրջանի լեզվի և ոճի հարցերը:

³ Թեև միշտ չէ, որ գա նրան հաջողվել է: Առանձին դեպքերում Չոպանյանը լեզվական հաջողություններ է տեսնում այնտեղ, որտեղ դրանք բացակայում են, ինչպես նաև Պեյի՝ գրաբարյան նախդիրներով ծանրաբեռն, նրբերի, արտաքուստ զարդարուն քերթվածներում կամ Միսաքյանի «Սոփիան» վիպակում և այլն:

գես ամսօրյա», «Շիրակ», «Նոր կյանք»։ «Բազմավեպ» և այլն)⁴ դեռ հաճախադեպ կիրառություն ունեին գրաբարի, միջին հայերենի ու բարբառների ազդեցությամբ կաղմված ձևեր, տարրնթաց քերականական կառույցներ, նախդրավոր կապակցություններ, որոնք հետագայում պիտի դուրս մնային սրբապատկեր գրական լեզվից։ Անմիջականությունը զգալի էր հատկապես հոլովման ու խոնարհման համակարգերում։ Այս տեսակետից «Անահիտի» լեզուն ներկայանում է ավելի կանոնական ու մշակված⁵։ Այսպես.

1) Եթե նախորդ շրջանի (առանձին դեպքերում նաև ժամանակակից) արևմտահայ մամուլի լեզվում գործածություն ունեին անձնական, ցուցական և հարաբերական դերանուններ⁶, նաև գրաբարից ու միջին հայերենից վկայված ձևերը, ապա «Անահիտում» քիչ բացառություններով, գործածական են գրական աշխարհագրում կանոնադրված ձևերը։ Մի դեպքում ունենք՝ ըստ նոր կարգադրության մեծում (Բյ., 1889, № 1, էջ 1), նորա, նոբա, մեբ (ն. տ., էջ 13), Այլ և չիք գործ ուրոյ ընդհանրական հանգամանք (ն. տ., № 157, էջ 217), նորա կենսական պիտույիցը (Մ., 1890, № 311, էջ 153), ո՞յք էին որք... (ն. տ.), ինքեանք ինչ դիրքի տէր ալ լինին (ն. տ.), հեռու կենալու ձեռնէ (ն. տ., № 318, էջ 210), որք (Մ., 1893, № 3978, էջ 83), կըսէ ինձ (ն. տ., № 1, էջ 2, 5), յորում (ն. տ., 1896, № 4, էջ 100), որոց թողնեցը, որոց կ'հակին (Ար. մ., 1897, № 1, էջ 75, 76), որոյ գրութեան շարժառիթին (Բզմ., 1898, № 6, էջ 267), կու տայ մեզ (ն. տ., էջ 263), սոքա կը կոչուէին (ն. տ., № 8, էջ 367) և այլն, մյուս դեպքում՝ հարաբերությունները խզելու ինձմէ (Ան., 1901, № 3, էջ 75), անուանելով զիս (ն. տ.), հայտնած էին ինձի (ն. տ.), որոնք հայուն պիտի տան (ն. տ., № 9, էջ 217), որուն ամբողջ կեանքը (ն. տ.), զիրենք, տան իրենց (ն. տ. № 4—5, էջ 135), զորոնք բոլորն ալ (1902, № 5, էջ 102), ինձմէ աւելի լաւ (ն. տ., № 8, էջ 170), զայն ցոյց տուած շրլլան (ն. տ., էջ 169), Մանչեսթրէն մեզի կը հաղորդեն (ն. տ., 1903, № 9, էջ 106), մեզ մոլեռանդ կուրթեան մը մէջ պահեր (1902, № 8, էջ 169) և այլն։ (Հազվադեպ՝ մեքէ շատերը (1902, № 5, էջ 99)։

2) Գրական արևմտահայերենի ժխտական խոնարհման կազմությունը միշտ չէ, որ պահպանվում է 90-ականներին, երբեմն նաև ավելի ուշ շրջանի մամուլի լեզվում։ Չի-ն հաճախ օգտագործվում է այնտեղ, որտեղ ըստ կանոնի պետք է լիներ եղանակչին կամ օժանդակ բային կցված չ։ «Անահիտն» առանց բացառությունների պահպանում է խոնարհման՝ գրական լեզվին հատուկ կազմությունը։ Այսպես օրինակ, ազգութիւն չի մտնալ (Բզմ., 1900, № 6, էջ 244), չի ծանոթացան (Մ., 1902, № 1, էջ 1), չի կայ (ն. տ., էջ 33), չի կենդանացած (Մ., 1890, № 311, էջ 156), չի նաւնածն (Բյ., 1903, № 10, էջ 181), չի փախցուց (ն. տ., № 17, էջ 322)։ Չի օժանդակ բայի ժխտական ձևի այսպիսի գործածության օրինակներ են հանդիպում նաև այնպիսի պարբերականներում, որոնց լեզուն վերջիններին համեմատությամբ բավականաչափ մշակված է ու նորմավորված։ Խոսքը «Շիրակ» և «Նոր կյանք» հանդեսների մասին է. տեղ չի կայ (Շ., 1905, № 2, էջ 138), չի կրցալ (ն. տ., էջ 139), պիտի չի մնան (ն. կ., 1898, № 6, էջ 83), սահման չի կայ (ն. տ., № 15, էջ 225), հեղափոխական չի կայ (ն. տ., էջ 226) և այլն։ Բայց «Անահիտում» ունենք՝ շարունակեց շնորհել (Ան., 1901, № 2, էջ 60), կեանքի նշան չէ առած (ն. տ.), պիտի չգտնուի՞ն (ն. տ.), աղքատը չի գիշանիւր (ն. տ.), պէտք է չմտնալ (ն. տ., № 4—5, էջ 103), տարակույս չկայ (ն. տ.) և այլն։

3) Ժամանակի արևմտահայ մամուլում լայն գործածություն ունեւոր լի-նել բայն իր խոնարհված ձևերով, սակայն «Անահիտն» ընտրում է ըլլալ

⁴ Այսուհետև բնագրում տրվելու են այդ պարբերականների կրճատ անվանումները, համապատասխանաբար՝ Բյ., Մ., Մ., Ար. մ., Հ. ամս., Բզմ., Շ., Ն. կ., Ան., ապա՝ համար՝ և էջը։

⁵ Հմմտ. Հովհ. Գաղանճեան, Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի, Կ. Պոլս, 1925։ Օրինակները հիմնականում առաջնորդող հոդվածներից են։

ձևը, որ վկայված է գրական արևմտահայերենում: Հետևաբար պատկերն այսպիսին է. պիտի լինի (Մ., 1890, էջ № 321, 234, 289) կ'լինին (Ար. մ., 1899, № 7, էջ 258), կրնա լինի (ն. ա., էջ 261), կամիր լինի (ն. տ., էջ 263), գիտուն լինին (ն. տ., 1897, № 1, էջ 5), կ' դառնայ լինի մեծ կեդրոն մը (Մս., 1896, № 6, էջ 166), լինի (Շ., 1905, № 1, էջ 12), սակայն՝ պէտք է այսպէս ըլլայ (Ան., 1901, № 2, էջ 60), ստիպուած չըլլայ (ն. տ.) հեռացած ըլլալ կը թուին (ն. տ., № 4—5, էջ 103), ճիգը պէտք է ըլլայ (ն. տ.), գաղափարն ըմբռնած ըլլալուն համար (ն. տ.) և այլն:

Քննվող պարբերականներում հանդիպում են նաև գրական լեզվի օրինաչափություններից այլ շեղումներ, տարբերություններ, զարտուղի ձևեր, որոնք, սակայն, ավելի մասնական բնույթ ունեն, ոչ բոլոր պարբերականներում են գործածական: Ինչպես՝ 1. սեռական՝ իմ, բու, մեր, ձեր, իր, իրենց ձևերի հետ եզակի չերոորդ դեմքի իւր գրաբար հոլովածների գործածությունը: Օրինակ, գիւր ազգն (Մ. 1890), իւր լեզուն եւ իւր գիւղին համար (Մս., 1896), իւր վարդապետութեան (ն. տ.), իւր քահանայները (ն. տ.), իւր ջատագովութեան (Բզմ., 1898), իւր արդարացումը (ն. տ.) և այլն: 2. Հոգնակիի կազմության ժամանակ առանձին դեպքերում յ-ի պահպանումը: Օրինակ, պարագայներ (Շ., 1905), քահանայներով (Մ. 1890): 3. Գրաբարից եկող հայցականի նախդրովոր ձևի պահպանումը որոշ գոյականներում: Օրինակ, զնայեմ ուրիշ բանով չժանրարեռնեն (Հ. ամս. 1901), մարդս կարող չէ զատուածն ճանչնալ (Բյ. 1903), կը քաջակերէ զմիաբանութիւնն (Բզմ., 1898), կը ստիպեն զՊետրոս որ զնոյսեան օծէ (ն. տ.) և այլն: 4. Սահմանական ներկայի և անցյալի համար բաղաձայնով ակավող բայերի դեպքում կը եղանակիչի բային միացած և առանց ք-ի կազմությունն ու գրությունը: Օրինակ, կ'վանէ, կ'մշակէ (Ար. մ. 1899), կ'փափափի (ն. տ.), կ'մնայ մեզի (Մս. 1896) և այլն: 5. Սահմանական ներկայի հոգնակի առաջին դեմքի մի գրաբարաձև կազմությունը: Օրինակ, ըսել կուգեմք (Բյ., 1889), անցնիմք (Ար. մ., 1895), կը դիտեմք (Մս., 1893), պիտի ջանամք, չեմք ուրանար (ն. տ., 1896), ոչ կրնամք, կը քննեմք (ն. տ., 1894), մենք կընծայեմք (Բզմ., 1898), շունչեմք (ն. տ.):

«Անահիտի» հրապարակախոսության լեզվում նշված քերականական իրողությունները չեն առկայում: Եվ ընդհանրապես, գրեթե բացակայում են անհարկ բազմաձևությունները, նեղ բարբառային ու զուտ գրաբարյան իմաստով բառերի ու արտահայտությունների գործածությունները (չհաշված, իհարկե, գրաբարով կամ բարբառով, նաև արևելահայերենով ջարագրված առանձին նյութեր, որոշ հեղինակների գրաբարամետ ու բարբառագիր ձգտումների ինչ-ինչ դրսևորումներ): Իսկ գործածվող ձևերն ու արտահայտությունները (այդ թվում՝ աշխարհաբարի ընդհանուր օրինաչափություններից շեղվող հոլովածները), իբրև կանոն, խոսակցական լեզվում պահպանվածներն են, որ հետո պիտի ամրակայեին գրական արևմտահայերենում: Ինչպես՝ ի հաբկէ, ի նպաստ, ամիսէ ի վեր, առ Հայաստան, ի Ֆրանսա, տարիէ մը ի վեր, ի մօտոյ, հրապարակալ քննադատել, ըստ իս, ի լոյս պիտի ընծայենք, գէն ի ձեռին, ի գիր առին, ժողովողեան, յաչս Օսմանցաց, դռնակեանց, ձեռամբ, կարծեաց, Ռուսաց եւ Վրացաց, հնչակեանց և այլն: Դրանք հանդեսում ավելի ոճական-արտահայտչական արժեք ունեն, քան զուտ լեզվական-քերականական:

Լեզվական տարբերությունների շարքն, անշուշտ, կարելի է շարունակել. սակայն, այս համառոտ ուրվագրումն անգամ, մեր կարծիքով, որոշ է ցուցադրում «Անահիտի» լեզվի մշակված, կանոնական ու նորմավորված բնույթը: Իսկ դա լեզվի ժողովրդայնության կարևորագույն հատկանիշ է:

Դրա հետ մեկտեղ, «Անահիտի» լեզուն ունի ներքին որոշակի գծեր, յուրահատկություններ, որոնք առանձին դրսևորումներում շեղվում էին լեզվի ժողովրդայնության իր ժամանակի հաճախ պարզունակ ըմբռնումներից: Եվ դա երբեմն պատճառ է եղել, որ հանդեսի լեզուն ու ոճը սուր քննադատության ենթարկվեն հակառակ դիրքերից, իբրև ապաժողովրդական, ինքնանպա-

առակ գեղարվեստի ոլորտներ միտող երևույթ⁶:

Ի՞նչ գծերի և յուրահատկությունների մասին է խոսքը: Հայտնի է, որ լեզվի ժողովրդալեզվային կարևորագույն հատկանիշներն են լեզվամտածողությունը, արտահայտչաձևերին հատուկ մի շարք միջոցներ, խոսակցական, պարզ, «հասարակ ժողովրդական» բառերի ու արտահայտությունների գեղարվեստություն, կրկնություններ, զեղչումներ, սեղմություն, մտայնություն, համառոտություն, համադաս. անշաղկապ կապակցությունների, խոսակցական շարահյուսական կառույցների առատություն և այլն: «Անահիտում» նշված արտահայտչամիջոցները խիստ որակային ու քանակական ընտրության են ենթարկված: Իսկ վերաբերում է և՛ բառային, և՛ քերականական մակարդակներին:

Հազիվ թե կարելի է ասել, որ հանդեսում գերակշռում են զուտ խոսակցական ու բարբառային բառերն ու արտահայտությունները: Դրանք հանդեսն ավելի շատ չի օգտագործում, քան նույն շրջանի այլ պարբերականներ: Սակայն, «Անահիտում» մշակվում են բառաօգտագործման բնույթի, եթե ոչ նոր, ապա մի շարք հետաքրքրական սկզբունքներ:

Բառի ընտրությունը նախ և առաջ թելադրվում է բառի իմաստով, նրա այն հատկությամբ, թե ինչ ստուգություններ է արտահայտում երևույթը: Ասել է թե բառի ծագումնային պատկանելությունը առաջին պլանի վրա չէ: Սակայն, մյուս կողմից, հատուկ նշանակություն է տրվում այն սկզբունքին, թե տվյալ բառը որքանով է հարազատ ժողովրդական լեզվամտածողությանը, ինչ չափով է արտահայտում ազգային լեզվամտածողությունը: Ուստի ընտրության հնարավորության դեպքում նախապատվությունը տրվում է բուն ժողովրդախոսակցական ձևերին ու արտահայտություններին: Ինչպես. լրճուկ, գէվգէկ, գէշ, քեֆ, մեծկակ, նիհարկէկ, կը փաշկրտէ, կը սկրդեն, թուլումպանի, մնառութիւն, աղօթքան, քալա, պռռռ, խլրռռ, փաշկրտում, պղտոր, կլափ, ֆավէնով, հողին վրայ կֆած, ձեռք զարնելու և այլն, փոխանակ՝ նիհար, շատախոս, ագեղ, ապուշ, շատ մեծ, աղտոտութիւն և այլն:

Հանդեսում, այսպիսով, ազատ գործածություն են ստանում ինչպես խոսակցական-բարբառային, այնպես էլ գրաբարյան լեզվատարրերը, ծագումնային ու ոճական տարբեր պատկանելություն ունեցող բառաշերտերը, քերականական զուգաձևերը: Գրաբարյան ու խոսակցական բառերի, ձևերի ու արտահայտությունների այսպիսի ազատ կապակցումը ի՞նչպե՞ս նկատելի արժեք ունի: Այն հանդեսի բառաօգտագործման բնույթի երկրորդ կարևորագույն առանձնահատկությունն է:

Այդպիսի կապակցման օրինակները բազմաթիվ են ինչպես Ա. Չոպանյանի հեղինակած գրվածքներում, այնպես էլ հանդեսի աշխատակիցներից շատերի գրական գործերում: Հետաքրքրական է, որ դրանք հաճախ են հանդիպում նաև հրապարակախոսական բաժնի նյութերում:

Հրապարակախոսական ոճը նախ և առաջ բնութագրում են այնպիսի բառապաշարային ու դարձվածաբանական միավորներ, քերականական կառույցներ, որոնք լեզվաբանական գրականության մեջ ընդունված է կոչել կաղապար (շտամպ): Սակայն հրապարակախոսական ոճը չի սահմանափակվում միայն դրանցով: Այն լայնորեն կիրառում է նաև արտահայտչական այլ միջոցներ: Տեղի է ունենում կաղապարի և արտահայտչամիջոցի մի հետադուր հաջորդափոխություն: Այս երևույթն ահա ինչպես է ներկայացնում Կ. Կոստամարովը. «Լրագրային-հրապարակախոսական ոճում գոյություն ունեն և պաշարում են երկու հակադեմ միտումներ. ձգտումը կայունացման (պատրաստի ձևակերպումների, բառաձևերի, բառակապակցությունների ու կառույցների ստեղծում) և ձգտումը դեպի արտահայտչականություն, որը ծնում է նոր միջոցների փնտրումը՝ ընթերցողների վրա ներգործելու համար: Արտահայտչական միջոցները շատ արագ վերածվում են կաղապարների»:

⁶ Տե՛ս «Մուրճ», Թիֆլիս, 1909, № 4—5, էջ 486:

կորցնելով իրենց զգացական լիցքը և պահույնը՝ են նոր փոփոխություններ։ Լրագրային-հրապարակախոսական ոճը մ' կալուն է, և՛ շարժուն»⁷։

Լրատվական ու արտահայտչական տարրերի այս հերթագայումը կազմում է հրապարակախոսական ոճի էությունը և գլխավոր հատկանիշը։

Ճշմարիտ է դիտված, որ ժուռնալիստիկայում ձևը (նկատի ունի նաև լեզուն ու ոճը) առավելագույն չափով է պայմանավորված պարբերական հրատարակության բովանդակությամբ, խնդիրներով, նշանակությամբ, նրա տիպով ու բնույթով⁸, որի խոսքով, արտալեզվական գործոններով։

«Անահիտի» ազգային-գեղագիտական ծրագիրը, նպատակադրումը, գրական-գեղարվեստական հանդեսի տիպը, ընդհանուր թեմատիկան ու բովանդակությունը, ընթերցող լսարանի ինֆորմացիոն ու գեղագիտական պահանջ-մունքները և վերջապես աշխատակից-հեղինակների անհատականությունը արտալեզվական այն գործոններն են, որոնք զգալի չափով պայմանավորում են հանդեսի լեզվի և ոճի բնույթը։

Այսպես, հանդեսն իր բնույթով ու նպատակագրմամբ և իհարկե գործունեությամբ լրատվական ներգործող ֆունկցիային (որ ընկած է հրապարակախոսական ոճի հիմքում) զուգահեռ առաջին պլան է մղում գեղարվեստական գրականությունը հատուկ գեղագիտական ճանաչողական ֆունկցիան, ուստի և այդ հիմքի վրա լայնորեն օգտվում է գեղարվեստական ոճի կառուցվածքային ու արտահայտչական հնարաններից։ Դա շատ հստակ արտահայտվում է հանդեսի լրագրային ժանրերի լեզվաոճական նկարագրում։

Նյութի ժանրային տարաբաժանումը շոշափում է ոճի սկզբունքային հարցերը։ Որևէ լրագրային ժանրի լեզու ու ոճ նկարագրել, նշանակում է որոշել նրա բառային-դարձվածաբանական ու քերականական կազմը, բացահայտել դրանց տարածման ընդգրկումը⁹։

«Անահիտը» լայնորեն օգտվում է վերլուծական-հրապարակախոսական ու գեղարվեստական-հրապարակախոսական ժանրերի ընձեռած արտահայտչական հնարավորություններից՝ դրանց լեզուն ու ոճն ընդհուպ մոտեցնելով գեղարվեստական գրականության լեզվին ու ոճին։ Ավելին։ Նույն ձգտումը նկատվում է նաև լրատվական ժանրերում։ Ընդհանրապես ինֆորմացիոն ժանրերին հատուկ տեղեկատվությունը, հրատապությունը թելադրում են համապատասխան լեզվական միջոցներ՝ «ինֆորմացիոն» բառերի գերակշռություն, լեզվական-քերականական պարզ կառուցվածքներ, արտահայտչական խիստ սահմանափակ հնարավորություններ և այլն։

«Անահիտի» քրոնիկների բառային-դարձվածաբանական կազմն անշուշտ ունի «տեղեկատու» բնույթ, կիրառություն ունեն նաև կաղապարային ձևերով։ Ահա ալգպիսի լեզվական միավորների մի քանի օրինակ. «Անաթոլ Ֆրանս... 7 շառ սիրուն ընդունելութիւն մը գտած է այնտեղի Հայերուն կողմէ...», «Շահինի գործերը շատ մեծ յաջողութիւն գտած են», «Սվաճեան գտած է շատ սիրալիւ ու շատ փաղափշալան ընդունելութիւն մը ամերիկեան բարձր դասի երաժշտասէրներէն», «Հանոյֆով կիմանաւք, որ...», «Հանոյֆով կ'իմանամ նաեւ մասնաւոր նամակներէ», «Սեպտեմբեր 14 թուականով Պոլսէն հեռագիր մը կը ծանուցանէ», «Պոլսէն, ամենաառոյգ աղբիւրէ մը մեզի կը հաղորդեն...» և այլն։

Սակայն նույն քրոնիկներում նկատվում է հրապարակախոսական ոճի բառային ու քերականական մակարդակների ակտիվացում. բառը, դարձվածը նոր օգտագործմամբ ստանում են հասարակական երանգ, միաժամանակ սրվում է դրանց զգացական-լուրտահայտչական կողմը։

Բառերի նոր օգտագործում ասելով նկատի ունենք ամենից առաջ վերն հիշված հերթագայության սկզբունքը. գրաբարյան, հնացած, խոսակցական

⁷ Տե՛ս Թ. Կոստոմարով, Русский язык на газетной полосе, М., 1971, с. 19.

⁸ Язык и стиль средств массовой информации и пропаганды, М., 1980, с. 10.

⁹ Տե՛ս Вестник московского университета, 1967, № 3, с. 54.

ու բարբառային բառերի և արտահայտությունների անսովոր կիրառումները, որոնք սովորական (ընդունված է ապել նաև «շարքային») բառերի ընդհանուր շղթայում անմիջապես ուղադրություն են գրավում, խոսքիս հաղորդում նկատելի արտահայտականություն: Օրինակ՝ «Բայց Տաճկաստանի խնդիրը ճիշդ այն միակ կետը կը կազմէ որ ուսական եւ ֆրանսիական քաղաքականութիւնն են իրար ետ սկըղեն», «Անոր սոսկական կեանքը հրապարակի վրայ կը փաշկալէ եւ այդ գծում գործին մէջ ի կիր կ'արկանէ խեղաթիւրումի, զրպարտութեան, ստույգեան աղտոտ զէնքերը», «48-ի շարժման ատեն՝ պարիքատներուն վրայ գէն ի ձեռին կռուեցան ֆրանսացի ազատականներուն հետ», «Պ. Հախումեան տարի մը առաջ ի ձայն փողոյ եւ թմրկի ծանոյց...»:

Իբրեւ արտահայտականության աղբյուր, հանդեսը դիմում է նաև փոխառյալ բառերի ու արտահայտությունների, օտարաբանությունների, իմաստային տարբեր նրբերանգներ ունեցող տերմինների. փլեթանք, լոլեծ, ֆրագ, մոզայիք, բեծիմ, բայա, սթիլսքներ, բլաշներէն, բլանշներ, սփանալայ, բալթիկ, բոկրամ, «ամաթօն»ներ, «խսթեռի», տիրապետող «փաթ»ին, «պատրիոտ», և այլն: Ինչպես երևում է բերված օրինակներից, օտար բառերը հաճախ առնվում են շակերտների մեջ, գրվում շեղագիր, կամ էլ գործածվող օտար բառի դիմաց փակագծում տրվում է հայերեն բացատրությունը և հակառակը: Սա նպատակ ունի էլ ավելի շեշտելու բառի ուղղակի իմաստը:

Պետք է ասել, սակայն, որ հանդեսում գործածվող փոխառությունների մի մասը (դրանք հիմնականում ֆրանսերենից են) արևմտահայ լեզվի զարգացման հետագա ընթացքում քննություն չի բռնել և դուրս է մնացել բառապաշարից: «Անահիտի» լեզուն արդարացի քննադատության է արժանացել ինչպես այդ, այնպես էլ հայերենին խորթ մի շարք բառաձևերի ու արտահայտությունների համար՝ շեղշեղջումը, փոքրագնեին, կը խառնառնեմ, խեսութեան, դոնդոշներ, լիպիֆներ, խառնամառնում, լիսնուկ, գաղվաղվուրթին և այլն:

Հանդեսի լեզուն հարուստ է դարձվածներով, փոխաբերություններով, մակդիմներով, համեմատություններով: Դրանց գործածությունը շահավոր է հրապարակախոսության մեջ, մանավանդ լրատվական ժանրերում: Սակայն, կիրառվող մի շարք լեզվաոճական հնարքներ ավելի են սրում դրանց զգացական բովանդակությունը, ընդգծում արտահայտականությունը խոսքի համեմատաբար փոքր հատվածում:

Դարձվածային միավորները, օրինակ, իբրեւ կանոն գործածվում են ոչ թե ուղիղ, այլ խոնարհված ձևերով, մի բան, որ զգալի արտահայտականություն է հաղորդում խոսքին: Այսպես. «Մուսա-պէլի դատը, որ մեծ աղմուկ հանեց, արդէն կրակը տուած էր վառուին», կամ՝ «...մեր ազգային քաղաքականութեան ծանրութեան կեդրոնը սխալ տեղ գրին...», «Այդ երեկույթէն դաս մը պէտք է որ քաղէ Բարիգի Հայութիւնը», «Ուրեմն այդ «շովինութիւն» բառը վերջապէս զամբիւղը կը նետեմ...» և այլն: Նրբեմն գործ են ածվում նաև օտարալեզու ասացվածքներ, դարձվածներ. «Բայց չի մոռանանք նոյնիսկ անոնց այն առածը որ կ'ըսէ «պալըզ պաշտան Գոգար» (հոտած գլուխ), «...պատասխաններ էր թէ ատիկա հիքմեթի հիւփիմթ (կառավարական գաղտնիք) մըն էր»:

Լրագրային ժանրերում փոխաբերություններն ու համեմատությունները սովորաբար կազմվում են երևույթի արտաքին, ակնհայտ գծերի ու հատկանիշների հիման վրա: «Անահիտի» հրապարակախոսության լեզվաոճում նկատելի է ներքին բովանդակային գծերի հաշվառման ձգտումը, որն ավելի արտահայտիչ ու ազդեցիկ է դարձնում խոսքը: Ահա այդպիսի փոխաբերությունների ու համեմատությունների մի քանի օրինակ. «...որպէս թէ դեռատի տաղանդի մը մանգաղումն իմանայինք», «...թարգմանութեանց մէջ ոճը կը հոսի առուակի մը պէս, ու կ'երգէ ու կը շողայ», «Տառական թարգմանութիւնը կը նմանի սպանուած ու զմոսուած անասուններու զոր բնական գիտութեանց մուսեռներու մէջ կը ցուցադրեն...», «...որոնք այնքան ճշմարիտ են որքան լուսնին երկնքէն իշնելու, Մուհամետին շապիկին մէկ կողմէն մտնելու եւ միւս

կողմէն դուրս ելլելու հիմնավորաց... հեքիաթը... զայն կը ներկայացնեն այն-
քան համատարմութեամբ, որքան ճահիճ մը իր վրայ ծռող դէմք մը կը պատ-
կերացնէ», «նուաղ դրադէտ քան յետին ժամկոչը» և այլն:

«Անահիտի» լեզվին հատուկ են աստիճանավորումը, համազոր, համա-
դաս անդամների ու կապակցությունների կրկնությունները: Մի բան, որ հա-
յուսկ չէ հրապարակախոսական ոճին առհասարակ: Լեզվական միջոցների
մասն լրնորությունն ու գործածությունը ամենից առաջ պայմանավորված է
հերևելուն իր բովանդակ էությունը, բազմակողմանիորեն ներկայացնելու ճշգ-
րումով, ինչպես նաև լեզուն, «ինքն իր մեջ» զարգացնելու մտահոգությամբ:
Բայն այն էր, որ 80—90-ականներին մամուլում գեռ ամբողջությամբ հաղթա-
հարված չէր բառի իմաստային առումների նկատմամբ ոչ ճշգրիտ մոտեցումը,
երբեմն անհրաժեշտ ուշադրություն չէր հատկացվում բառիմաստային նրբու-
թյուններին: Բառերի իմաստային առումների նկատմամբ բծախնդրության
հասնող վերաբերմունքով և դրանց ճշգրտման դերով «Անահիտի» լեզուն
առանձնանում է:

Գործածված յուրքանչյուր բառ, լեզվական յուրաքանչյուր միավոր, իբրև
կանոն, կրում է իմաստային իր ծանրությունը, նոր գիծ, նոր նրբորանգ է
ավելացնում ասվածին: Պատկերայնության բնույթը տարբեր է՝ ընտրված
փոխաբերություններն ու համեմատությունները, միմյանց հաջորդող մակ-
դիրները երբեք չեն կրկնում իրար և ճշգրիտ են, նախատեսված ոչ միայն արտա-
հայտչական ներգործության համար, այլև գլխավորապես առարկաների ու
երևույթների բնութագրման խորացման կամ, ինչպես հանդեսում է ասվում,
իմաստային ու արտահայտչական ճարակ տարբերություններ ստեղծելու»
համար: Բազմաթիվ օրինակներից բերենք միայն մեկը՝ հրապարակագրու-
թյան էությունն ու դերը բնութագրող տողերը. «Այդ քառսին մէջ, ուր այնքան
գեղեցիկ տարրեր այնքան տգեղ տարրերու հետ կը խառնամառնեն, բերե-
լու համար որոշ, հզոր, սուր, պարզ ու առողջ լոյս որ ժողովրդին բոլոր խա-
ւերուն մէջ կարող պիտի ըլլար թափանցելու եւ ցոյց պիտի տար շիտակն ու
սխալը, տգեղն ու գեղեցիկը, անհրաժեշտ էր հրապարակագրութիւնը, այսինքն
սենեակէն դուրս ելած, Պառնասէն վար իջած, քնարը մէկդի ձգած, հրապա-
րակի վրայ նետուած ու ժողովրդին խառնուած, ժողովրդին առօրեայ կյան-
քովը միայն զբաղին իրեն նպատակ ընտրած ու ժողովրդին լեզուովն անոր
խօսող ու կեանքի ճամբայ մը անոր դոյց տուող պարզ ու հստակ եւ զգոր-
ծող գրականութիւնը»:

Բառերի իմաստային առումների «բարակ տարբերութիւններու» հաշվա-
ռումը «Անահիտի» բառագոյնագրածման բնույթի երրորդ կարևորագույն
առանձնահատկությունն է:

«Անահիտի» հրապարակախոսական ոճին հատուկ են նաև լեզվի պատ-
կերավորության ու արտահայտչության այլ միջոցներ ու հնարներ. բայական
կապակցությունների փոխարեն անվանական կապակցությունների գերա-
կշռություն, նույն բաղադրիչ մասերից կամ համահնչյուն տարրերից կազմված
բարդությունների զուգադիր գործածություն (ճշտապէս ու ամբողջապէս, հա-
կակիր ու հակախոհ, որոշաբար ու գիտակցաբար, անընտիր ու անխտիր),
բառաբարդումներ՝ մի մասը գրաբարից փոխառված (օտարախոյր, ծանրա-
տաղտուկ, փրփրոտոյց, որոշաբար, ճոխապաճոյճ), մյուս մասը՝ ինքնա-
ւտեղծ (սաստկաբուռն, չափադիտութիւն, նախընդօր, կաղզոյր, առհամրա-
շունչ, անդրջրհեղեղան, Հայաստանասիրութիւն), երրորդները՝ գործածվող
բարդություններ, բայց նոր համագրությամբ (հոգեբան-գեղարուեստագէտ,
հայրենասէր-մակարոյծներ, պոռոտախոս-դիվանագէտ, հայրենասէր-թուրխսթ-
դերասան-գործիչներ) և այլն:

Ինչ վերաբերում է լեզվի ժողովրդայնությունը հատկանշող քերականա-
կան-արտահայտչական լեզվամիջոցներին (պարզ նախադասություններ, խո-
սակցական շարահյուսական կառույցներ և այլն), վերն ասվածից դժվար
չէ կոհակ, որ դրանցով «Անահիտն» աչքի չի ընկնում: Ընդհակառակը, հան-
դեսի լեզվում գերակշռում են շաղկապական կապակցությունները, բաղմա-

բարդ քերականական կառույցները, ծավալուն պարբերությունները (վերջիններս մեծ լարվածություն ու հրապարակախոսական լիցք են հաղորդում խոսքին), նրբեմն նախադասությունը կազմող բառերի թիվն անցնում է հարյուրից: Բայց ի՞նչն է բնութագրական:

Նշված լեզվատարրերը դույզն-ինչ չափով չեն խանգարում բառնկալմանը, նյութի մատչելիությանը:

Հանդեսի հրապարակագրական խոսքը հակիրճ չէ, բայց երբեք՝ մթազրնված, երկարաբան: Անմշակ չէ, հղկված է ու գեղեցիկ: Լեզվական տարրերի ճշգրիտ ընտրությունը և դրանց ոճականորեն պատճառաբանված կիրառումները, նախադասության կառուցվածքի ու կազմության, պարբերության ստեղծման օրինաչափությունների իմացությունն ու խստիվ հաշվառումը այն գործոններն են, որոնք հանդեսի խոսքը դարձնում են պարզ, մատչելի, կառուցիկ:

Այս յուրահատկությունները «Անահիտի» հրապարակախոսության լեզվաոճին հաղորդում են գեղարվեստական խոսքի հատկանիշներ, պայմանավորում այդ հրապարակախոսության ակնհայտ գեղարվեստականությունը:

Հրապարակագրական ոճի յուրահատուկ գծերի սահմաններում կիրառվող այս հնարները շատ կողմերով նոր էին հայ մամուլի լեզվական արվեստի ու մակարդակի համեմատությամբ:

ЯЗЫК И СТИЛЬ ПУБЛИЦИСТИКИ ЖУРНАЛА «АНАИТ»

Ю. С. АВЕТИСЯН

Р е з ю м е

В языке западноармянской печати 90-х годов наблюдается тенденция к нормированию, однако ряд форм еще не установились. В органах печати того времени, а в отдельных случаях и позже еще часты грабаровские, возникшие под влиянием среднеармянского и диалектных форм элементы, которые в дальнейшем выпадают из обихода западноармянского литературного языка. С этой точки зрения язык редактируемого Аршаком Чопаняном журнала «Анаит» (1898—1911) представляется более каноническим и обработанным. Кроме того, приемы, используемые в границах своеобразия публицистического стиля в журнале, во многом были новы по сравнению с бытующим языком армянской прессы и уровнем публицистики.